

ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ. ԴԺՈՒԱՐ ՀԱՄԱԿԵՑՈՒԹԻ՞ՒՆ ՄԸ

Posted on November 2, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Աբել քիւյ. Սանուկեան, Ժընեւ, 28 հոկտ. 2023

«Պետութեան եւ եկեղեցիին միջեւ համակեցութեան խնդիրը մեզ շատ կ'անհանգստացնէ: Բայց նախ հարց պէտք է տալ, թէ ինչպիսի՞ն է հիմա համակեցութիւնը եկեղեցիին եւ Աստուծոյ միջեւ: Երբեմն կը թուի, թէ եկեղեցիին եւ Աստուծոյ միջեւ բաժանումը շատ ակելի մեծ է, քան եկեղեցւոյ եւ պետութեան միջեւ»

Պետութեան եւ եկեղեցիին միջեւ իրաւական յարաբերութիւնները երկար եւ փոխադարձ պատմութիւն մը ունին: Ան տարաբնոյթ տարբերակներ պարունակող կապերու եւ յարաբերութիւններու բարդ ոլորտ է, յատկապէս անոր համար, որ առնուազն մեր պարագային այս կարեւորագոյն հարցը տակաւին վերջնականապէս կարգաւորուած չէ:

Աստուածաշունչը չի պարունակեր ո՛չ պետութեան ուսմունք, ո՛չ ալ պետութեան եւ կրօնի փոխյարաբերութիւններու մասին տեսութիւն մը: Նոր կտակարանը կը վկայէ, որ Յիսուս յստակ մօտեցում մը կը ցուցաբերէ պետական իշխանութեան նկատմամբ: Ան չի ժխտեր քաղաքական իշխանութիւնը, բայց միւս կողմէ իրեն համար պետութիւնը բացարձակ մեծութիւն մը չէ, այլ միակ մեծութիւնը Աստուած է, որ յերկինս է: Հետեւաբար՝ ան զինք փորձողներուն կը թելադրէ. «Տուք զկայսերն՝ կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ»: Սոյնը կ'ենթադրէ ոչ միայն քաղաքական իշխանութեան ճանաչում, այլ միաժամանակ որոշակի սահմանափակում, այսինքն՝ քաղաքական իշխանութեան տալ այնչափ, որ իր իրաւունքն է, մինչդէռ Աստուած հեղինակութիւն ունի մարդկային ամբողջ գոյութեան վրայ: Փաստօրէն՝ Նոր կտակարանը այդ ժամանակի հրեութեան մէջ առկայ պետական հեղինակութիւնը ընդհանրապէս մերժելու ծայրայեղ դիրքորոշման, իսկ միւս կողմէ զայն իբրեւ միակ հեղինակութիւն փառաբանողներուն միջեւ կը պահէ միջին դիրք մը:

Նոյնը կը վերաբերի նաեւ Հռոմայեցիներու թուղթին մէջ Պօղոս առաքեալի յայտարարութեան.

«Ամեն մարդ իր վրայ եղած իշխանութիւններուն թող հնազանդի. որովհետեւ չկայ իշխանութիւն մը, որ Աստուծմէ չըլլայ, եւ անոնք որ կան՝ Աստուծմէ կարգուած են: Հետեւաբար՝ ով որ իշխանութեան դէմ կը կենայ՝ հակառակած կ'ըլլայ Աստուծոյ հրամանին, եւ անոնք որ կը հակառակին՝ իրենց անձերուն դատաստանը կ'ընդունին»

Թեպետ Պօղոս առաքեալ կը պահանջէ, թէ պէտք է ենթարկուիլ քաղաքական իշխանութեան, սակայն իր ընդհանուր աստուածաբանութեան համաթեքսթին մէջ յստակ է, որ այդ արտայայտութիւնը պէտք չէ ընկալուի իբրեւ պետական-քաղաքական իշխանութեան ենթարկուելու անսահմանափակ պարտաւորութիւն:

Բնականաբար, Նոր կտակարանը գիտէ նաեւ քաղաքական իշխանութիւնը չարաշա-

հելու կարեւորութեան մասին: Չորօրինակ՝ Յայտնութեան գիրքին մէջ կը ներկայացուի քաղաքական ամենակոյլ բռնութեան պատկերը: Ուստի ան կը մերժէ բացարձակ տիրապետութեան հասնելու համար պետական բացայայտ ահաբեկչութեան վրայ հիմնուած որեւէ իշխանութիւն:

Հեթանոսութեան շրջանին, պետութիւն եւ կրօն իրարմէ անբաժան էին, քրիստոնէութիւնն է, որ գոյութիւն ունեցող այս իրավիճակը հարցականի տակ կ'առնէ՝ «աւելի Աստուծոյ պէտք է հնազանդիլ, քան մարդոց» սկզբունքով: Սոյնը լուրջ լարուածութիւն մը կը ստեղծէ Հռոմէական կայսրութեան եւ անոր սահմաններուն մէջ տարածուող քրիստոնէութեան միջեւ: Այսպէս՝ Հռոմի իշխանաւորները քրիստոնէական կրօնին կողմէ կայսրութեան հիմքերուն սպառնացող վտանգ կը տեսնեն, զոր կանխարգիլելու նպատակով արիւնալի հալածանք կը ծաւալեն քրիստոնէաներուն դէմ:

303-304 թուականներուն Դիոկղետիանոս կայսեր քրիստոնէաներու դէմ ծաւալած արիւնալի հալածանքներէն ետք, վերջապէս 313 թուականին կը ստեղծուի «Միլանոյի հանդուրժողականութեան հրամանագիր»-ը (Edictum Mediolanense), որուն շնորհիւ սկիզբ կ'առնէ քրիստոնէութեան պետական կրօն հռչակուելու ընթացքը, որ կ'իրագործուի Թեոդոս Ա. կայսեր 27 փետրուար 380 թուականի «Cunctos Populos» հրամանագրով:

Այստեղ պիտի չուզեմ ծանրանալ Արեւմուտքի մէջ պետութիւն եւ եկեղեցի փոխյարաբերութեան պատմական զարգացումներուն վրայ: Հոս մեզ կը հետաքրքրէ հայկական իրականութիւնը ժամանակի հոլովոյթին մէջ, որուն պիտի ուզէի անդրադառնալ հակիրճ դիտարկումով մը:

Որքան ալ հայ ժողովուրդին՝ քրիստոնէութեան դարձի պատմութիւնը մեր ջերմեռանդական զգացումները կը շոյէ, միեւնոյն է, ան ունի ստուերոտ կողմ մը, որուն իրականութիւնը շատ աւելի դաժան եղած է, քան կը պատկերացնենք:

Պատմագիտութիւնը եւ հայ միջնադարեան մատենագրութիւնը անվիճելի փաստերով կը վկայեն, որ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումը մահառիթ հետեւանք մը ունեցած է հայոց հին կրօնին նկատմամբ: Նոր վարդապետութեան ներկայացուցիչները բռնութեան եւ կործանումի ահեղ ալիք մը բարձրացուցած են հեթանոսական կրօնին եւ անոր հետ կապ ունեցող պաշտամունքային գրեթէ բոլոր կառոյցներուն դէմ: Թագաւորական զօրքը՝ գլխաւորութեամբ հայոց արքային, մասնակցութեամբ արքունի բարձրաստիճան պաշտօնեաներու եւ որոշ նորադաւան նախարարներու, ինչպէս նաեւ ներկայութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորիչի, մին միւսին ետեւէն հիմնայատակ կործանած են հայոց հնադարեան մեհեաններն ու տաճարները, իւրացուցած են անոնց ունեցուածքը, արծաթն ու ոսկին մասամբ բաժնած են կարիքաւոր ժողովուրդին, իսկ անշարժ գոյքն ու հողային կալուածները դարձուցած են սեփականութիւնը հեթանոսութեան փլատակներուն վրայ հաստատուող եկեղեցիին: Բացառուած չէ, որ միաժամանակ իրագործուած են բռնաճնշումներ հեթանոսական տաճարներուն ծառա-

յող թագաւորի քրմութիւններուն եւ քուրմներուն, նաեւ հաւատացեալ ժողովուրդին դէմ բռնի կրօնափոխութեան եւ կիրառուած մահապատիժներու փաստերով:

Անդրադառնալով հին Հայաստանի մէջ պետութիւն եւ եկեղեցի յարաբերութեան՝ արդէն սկիզբէն նկատելի է, որ եկեղեցին Տրդատ Գ. թագաւորի դարձի ակնհայտապատումով կ'աշխատի գերադաս դիրք մը ամրագրել պետական իշխանութեան նկատմամբ: Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումէն իսկ այս մօտեցումը կը փորձէ ցոյց տալ, թէ պետութիւնը կ'ընդունի հայոց կաթողիկոսին գերակայութիւնը, այսինքն՝ հասարակութեան մէջ պետական իշխանութիւնը ստորադաս է եկեղեցւոյ հեղինակութենէն, որ ուղղակի շնորհուած է անոր աստուածային իրաւունքով: Տրդատ Գ. հայոց պատմութեան հզօր եւ առինքնող տիրակալներէն մին եղած է, ուստի քրիստոնէական գաղափարախօսութեան ջատագովներուն կողմէ զինք մեր մատենագրութեան, մանրանկարչութեան կամ զանազան զարդաքանդակներուն մէջ իբրեւ գարշելի թագաւոր վարագ մը կամ Ս. Գրիգոր Լուսաւորիչի ոտքերուն առջեւ նուաստաբար խոնարհած եւ փոքրակազմ կերպար մը նոյնիսկ կրօնախորհրդանշական ենթախորքով ներկայացնելը ուղղակի անընդունելի է:



Պետութիւն եւ եկեղեցի յարաբերութիւնը, որ

Տրդատ Գ.-ի եւ Գրիգոր Լուսաւորիչի օրօք ներդաշնակ պատկեր մը ըլլալու տպաւորութիւնը կու տայ, միշտ ալ կարգաւորուած չէ եղած քրիստոնէութիւնը Հայաստան աշխարհի պետական կրօն հռչակած Արշակունիներուն օրով: Հոգեւոր առաջնորդներուն՝ հայոց թագաւորին նկատմամբ գերադաս հեղինակութիւն մը ձեռք բերելու նկրտումները ունեցած են վատ հետեւանքներ Տիրան թագաւորի եւ Յուսիկ Ա. Պարթեւ կաթողիկոսի, Արշակ Բ.-ի, Խաղ եպիսկոպոսի եւ Ներսէս Ա. Պարթեւի, Պապ թագաւորի եւ Նորէն Ներսէս Ա. Պարթեւի միջեւ:

Յատկանշական է Տիրան թագաւորի եւ Յուսիկ Ա. Պարթեւի միջեւ պատահած միջադէպը: Թագաւորը երկար ժամանակ կը հանդուրժէր կաթողիկոսին անհաշտ վարքագիծը, այսինչ վերջինս հետզհետէ կը կոշտացներ իր վերաբերմունքը թագաւորին հանդէպ: Երբ արքան, իշխաններով շրջապատուած, Մեծ Ծովք գաւառի Բմաբեղ եկե-

դեցին կ'ուզէ մտնել Յուսիկ կաթողիկոս կ'արգիլէ՝ ըսելով. «Չես արժանի, հի՞մ գաս, մի՛ գար ի ներքս»: Սա արդէն յստակ ոտնձգութիւն մըն էր պետական իշխանութեան դէմ: Այնուհետեւ Տիրան թագաւոր, չհանդուրժելով իր անձին կամ քաղաքական իշխանութեան դէմ ուղղուած անպատուութիւնը, նոյն եկեղեցիին մէջ բրածեծով մահապատիժի ենթարկել կու տայ կաթողիկոսը:

Հայ իրականութեան մէջ պետութիւն եւ եկեղեցի յարաբերութեան առումով մասնաւոր նշանակութիւն ունի Վաչագան Գ. Բարեպաշտ թագաւորին նախաձեռնութեամբ գումարուած Աղուէնի ժողովը, որ տեղի ունեցած է Ե. դարու վերջը կամ 2. դարու սկիզբը: Վաչագան Գ. Բարեպաշտ, 484 թուականի Նուարսակի դաշնագրէն ետք, կը յաջողի Արցախ-Ուտիք իշխանութիւնը յայտարարելու թագաւորութիւն եւ զայն ճանչցնել տալու պարսկական արքունիքին: Արդարեւ, այս շրջանին կը զուգահիշուի թագաւորին Աղուէն ամառանոցին մէջ աշխարհականներէ եւ եկեղեցականներէ կազմուած կանոնադիր ժողովի մը գումարումը, որ 21 կանոններ կը սահմանէ՝ մեր մատենագրութեան մէջ ծանօթ «Կանոնական սահմանադրութիւն» անունով: Սոյնը կ'աւանդուի Ե. դարու պատմիչ Մովսէս Կաղանկատուեցիի «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատութեան մէջ եւ, բնականաբար, ներառուած է «Կանոնագիրք Հայոց»-ին մէջ եւ ունի հետեւեալ վերնագիրը. «Սահմանադրութիւն կանոնի Վաչագանայ Աղուանից արքայի եղեալ ի ժողովն որ յԱղուէնս եղել գլուխ ԻԱ»:

Այս ժողովի գումարման դրդապատճառը, որ բնութագրուած է վերոյիշեալ սահմանադրութեան յառաջաբանին մէջ, որոշակի լոյս կը սփռէ պետական եւ եկեղեցական հեղինակութիւններուն միջեւ առկայ տարակարծութեան վրայ: Ահաւասիկ, սոյնը կարգաւորելու նպատակով Վաչագան Գ. Բարեպաշտ կը նախաձեռնէ այս ժողովին.

«Աղուանից արքայ Վաչագանի տարիներուն աշխարհականներու եւ եպիսկոպոսներու, քահանաներու եւ քորեպիսկոպոսներու, ազնուականներու եւ ռամիկներու միջեւ բազմաթիւ **հակառակութիւններ** տեղի կ'ունենային: Արքան կամեցաւ Աղուէնի մէջ գումարել բազմամարդ ժողով մը, որ կայացաւ մարերու ամսոյն տասներեքին»

Արդարեւ, Աղուէնի ժողովը մեր պատմութեան մէջ իրականացած գուցէ առաջին նախաձեռնութիւններէն մին է, որ կը փորձէ «Կանոնական սահմանադրութեան» մը հիմքերու վրայ կարգաւորել պետութիւն եւ եկեղեցի փոխյարաբերութիւնը, աշխարհական եւ հոգեւոր հեղինակութիւններուն միջեւ յառաջացած տարակարծութիւնները: Այսուհանդերձ, այս ժողովին սահմանած 21 կանոնները տակաւին չեն արտացոլեր եկեղեցականին համեմատութեամբ պետական իշխանութեան առանձնայատուկ բնագաւառները, այլ աւելի շեշտը կը դնեն հոգեւոր կեանքի յարաբերութիւնները կարգաւորելու իրողութեան վրայ:

428 թուականին հայոց թագաւորութեան կործանումէն մինչեւ Բագրատունեաց թագա-

Լորութեան կազմաւորումը, Հայ եկեղեցին ամբողջ չորս դար, թեպէտ օտար տիրապետութիւններու լուծին տակ, հայ նախարարական կամ իշխանական որոշ տուներու հետ կրցաւ պահել ազգին միասնականութիւնը: 26 օգոստոս 885 թուականին, Շիրակաւանի մէջ Գեորգ Բ. Գառնեցի կաթողիկոս Աշոտ Ա. Բագրատունին կ'օծէ հայոց թագաւոր, որուն շնորհիւ կը վերականգնուի 428 թուականին կործանած հայոց թագաւորութիւնը:

Ինչքան ալ աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութեանց ոլորտները տարբեր բնոյթ ունենային, այնուամենայնիւ, անոնք ամուր թելերով կապուած էին իրարու եւ փոխադարձաբար կը լրացնէին զիրար: Չորօրինակ՝ դաւանաբանական հարցերը թեւ հոգեւոր ոլորտին կը պատկանէին, սակայն եւ այնպէս միաժամանակ կ'առնչուէին քաղաքական հարցերուն եւ կը տնօրինուէին ոչ միայն կաթողիկոսին, այլեւ իշխանաց իշխանին, հետագային՝ Բագրատունեաց թագաւորներուն կողմէ: Հայ եւ Բիւզանդական եկեղեցիներու միութեան վերաբերեալ դաւանաբանական հարցերու ետին միշտ ալ առկայ եղած են Բիւզանդական կայսրութեան ծաւալապաշտական նկըրտումները, որոնց հակազդելու նպատակով Բագրատունի թագաւորներ միջամտած են դաւանաբանական վեճերուն՝ պաշտպանելով Հայ եկեղեցւոյ դիրքորոշումը:

Հայոց կաթողիկոսը իր կարգին անմասն չէր երկրի ներքին եւ արտաքին քաղաքական զարգացումներուն մասնակցելէ: Ան թագաւորին անմիջական եւ ազդեցիկ խորհրդատուներէն մին էր, եւ յաճախ անկէ լիազօրուած՝ միջնորդն էր իրարու դէմ գծուած իշխանները հաշտեցնելու կամ անոնց կեդրոնախոյզ ձգտումները կանխարգիլելու իմաստով

Դժբախտաբար, Հայոց այս շքեղ թագաւորութիւնը եւս՝ իր քաղաքամայր Անիի համբաւաւոր հազար ու մէկ եկեղեցիներով, հետզհետէ կը տրոհուի եւ ի վերջոյ կը կործանի 1045 թուականին՝ Բիւզանդիոնի նենգ քաղաքականութեան եւ ներքին դաւաճաններու՝ Վեստ Սարգիս Սիւնի իշխանի եւ Պետրոս Ա. Գետադարձ կաթողիկոսի հայրենադաւ գործունեութեան հետեւանքով:

Եկեղեցի եւ պետութիւն փոխյարաբերութեան մասին հայ մատենագրութեան մէջ թերեւս ուղղակի եւ համակարգուած առաջին վկայութիւնները կը գտնենք ԺԲ. դարու ականաւոր մատենագիր Մխիթար վրդ. Գօշի 1184-ին խմբագրած «Դատաստանագիրք»-ին մէջ:

Հայոց թագաւորը երկրի լիիշխան տիրակալն է: Ան օժտուած է քաղաքական, ռազմական, դատաիրաւական, նաեւ հոգեւոր-եկեղեցական լիազօրութիւններով: Փաստօրէն՝ հայոց արքան բացարձակ միապետ է: Մխիթար Գօշ վերոնշեալ իր գիրքին հետեւեալ գլուխին մէջ, որուն գրաբար բնագիրը այսպէս կը հնչէ՝ «Վասն թագաւորաց դատաստանի եւ որք ընդ ձեռաց նոցա», կ'ըսէ.

«Թագաւոր տիրապէս Աստուած է եւ անունակիր միայն մարդիկ, ոչ ճշմարիտք»

Այսինքն՝ թագաւորը իր դատելու իրաւասութիւնը ուղղակի Աստուծմէ ունի, իսկ մարդիկ՝

Տիրոջ անունով միայն: Ապա ան, անդրադառնալով թագաւորի եւ հայրապետի, այլ խօսքով՝ պետութիւն եւ եկեղեցի փոխարարեցրուեան, կը շեշտէ.

«Արքայի սեղանին, հայրապետէն բացի, ոչ ոք նստի՝ առանց արքայի հրամանին:

Արքայի արքունիքը, հայրապետէն բացի, ոչ ոք նստի, իսկ արքան հայրապետի տանը չնստի՝ առանց հայրապետի հրամանին:

Չըլլայ որ քրիստոնեայ թագաւորը հարձեր պահէ, ինչպէս անօրէն արքաները կ'ընեն, որովհետեւ **արքան իշխանութիւն ունի հայրապետին հետ բարձրանալու եկեղեցւոյ բեմը՝ Աստուծոյ առջեւ»**

Հայոց թագաւորը նմանապէս կը համարուի Տիրոջ օծեալը, հետեւաբար՝ հայոց կաթողիկոսին հետ իշխանութիւն ունի բարձրանալու սուրբ խորան եւ կանգնելու Տիրոջ առաջ



**Մխիթար վրդ. Գօշի «Գիրք դատաստանի» ստեղծա-գործութեան
տիտղոսաբերքը,
ՄՄ 2593, 1դ, Երզնկա, 1303 թ.:**

Մխիթար վրդ. Գօշի «Դատաստանագիրք»-ի կազմուելէն շուրջ 80 տարի ետք՝ 1265 թուականին, Սմբատ Սպարապետ, որ մեր մատենագրութեան մէջ ծանօթ է նաեւ «Գուն-դստաբլ» անունով, Հայկական Կիլիկիոյ միջավայրին համար կը խմբագրէ վերոգրեալին համանման «Դատաստանագիրք» մը, ուր «Վասն թագաւորաց եւ որդոց նոցին» գլուխին մէջ նոյնպէս կը նշէ.

«Ի մօտ թագաւորի մի՛ իշխեսցէ ոք նստել, քաւել՝ թէ ինքն հրամայէ, եւ յիր սեղանն՝ քաւել՝ հայրապետն ՉԷ իրաւունք, որ թագաւորն անպսակ սիրողով կենայ, զի Աստուծոյ եւ հայրապետի **օրինադրակից** է»

Հոս յատկանշական է միջին հայերէնի «**օրինադրակից**» բառը, որ օրէնքներ հաստատելու կամ դնելու մէջ թագաւորին եւ կաթողիկոսին միջեւ համահաւասար իշխանութիւն կ'ենթադրէ:

Հետաքրքրական է, որ թագաւորին քով պետական ակազանիէն՝ իշխաններէն առաջ կաթողիկոսը նախապատիւ դիրք մը ունի, բայց պետական-քաղաքական ոլորտին մէջ համագոր չէ թագաւորին: Բնականաբար, այստեղ թագաւորին վերապահուած է գերադաս դիրք մը, նաեւ ան, որոշակի իմաստով, մասնաւոր դիրք ու ազդեցութիւն մը ունի Հայ եկեղեցւոյ հոգեւոր կալուածէն ներս:

Արդարեւ, հայոց արքան կը տնօրինէ Հայոց աշխարհի՝ Մեծ Հայքի ներքին եւ արտաքին քաղաքական գործընթացը: Հայոց արքային անձը միանշանակ կը համարուի սրբազան եւ անձեռնմխելի, քանի որ թագաւորը Աստուծմէ է կարգուած,- կը շարունակէ Մխիթար Գօշ,- միայն Աստուծմէ կրնայ գահագրկուիլ կամ աքսորուիլ, որովհետեւ ան լիազօրուած է աստուածային իրաւունքով, ուստի ան սովորական մարդոց կողմէ անձեռնմխելի է, ինչպէս սոյնը ընդունուած էր Իսրայէլի մէջ.

«Թագաւորք կարգեալք յԱստուծոյ, որպէս Իսրայէլին, յԱստուծոյ բարձին եւ կամ աքսորեսցին»

Անդրադառնալով Կիլիկիոյ հայկական պետականութեան՝ պետք է ըսել, որ կաթողիկոսական աթոռը շատ ակնկալ շուտ տեղափոխուած էր Կիլիկիա, ուր Բագրատունեաց թագաւորութեան կործանումէն ետք՝ 1045 թուականին, հայ ժողովուրդին կարեւոր մէկ հատուածը սկսած էր հետզհետէ բնակութիւն հաստատել այդ տարածաշրջանին մէջ: Հայրապետական աթոռը արդէն 1062-ին փոխադրուած էր Դաւթլուր, ապա Ծամնդաւ, Շուղր, Ծովք եւ վերջապէս 1150-էն մինչեւ 1293 թուականը՝ Հռոմկլայ:



**Կիլիկիոյ Հայոց թագաւոր՝ Լեւոն Ե. Հերումեան (1320 - 1342), դատավճիռ
կայացնելու**

**կամ պետական հրահանգ տալու պահուն: Յատկանշական է մանրանկարին
վերի**

**ձախ անկիւնը երեւցող աստուածային Աջը, որ օրհնութիւն, ընդամին՝
լիազօրութիւն կը շնորհէ թագաւորին: Ձեռագիր 107, 1331 թ. Կիլիկիա,
ծաղկող՝ Սարգիս Պիժակ,**

Միսիթարեան մատենադարան ձեռագրաց՝ Վենետիկ:


Տարակոյս չկայ, որ նաեւ այս շրջանին Հայ եկեղեցին իր կարեւոր նպաստը ունեցած է Կիլիկիոյ մէջ հայոց պետականութեան կազմաւորման եւ ամրապնդման գործին մէջ: 6 Յունուար 1198 թուականին, Սիսի Ս. Սոփիա մայր տաճարին մէջ, ձեռամբ Գրիգոր Զ. Ապիրատ կաթողիկոսի, հայոց թագաւոր կ'օծուի Ռուբինեան իշխաններէն Լեւոն Բ.-ը, եւ այսպէս հիմը կը դրուի Կիլիկիոյ հայկական թագաւորութեան:

Ինչպէս նախկին ժամանակաշրջաններուն՝ հայոց թագաւորները կ'օծուէին կաթողիկոսին կողմէ եւ այդ օծումին ընդմէջէն կ'ընդունէին իրենց բացարձակ իշխանութիւնը: Այնպէս պիտի թուէր, որ այս փաստը ինքնին պետութիւն եւ եկեղեցի՝ աշխարհիկ-քաղաքական եւ հոգեւոր հեղինակութիւններուն միջեւ դրական հաւասարակշիռ մը եւ լաւագոյն համագործակցութիւն մը պիտի ապահովէր ի նպաստ հայկական պետականութեան հզօրացման: Սակայն կաթողիկոսական աթոռը 1193 թուականին Սիս փոխադրուելէն ետք, եկեղեցին հետզհետէ կը ներգրաւուի Կիլիկեան Հայաստանի վարչաքաղաքական ոլորտին մէջ: Դաւանաբանական քօղին տակ զարգացող հայ-հռոմեական ռազմավարական ճնշումներուն բերումով անբարենպաստ յարաբերութիւններ կը յառաջանան հայկական պետական իշխանութեան եւ եկեղեցիին միջեւ:

Գրիգոր Ե. Քարավէժ կաթողիկոս ձերբակալուելով կը բանտարկուի Լեւոն Բ.-ի կողմէ Կոպիտառ ամրոցին մէջ. հուսկ անոր անշնչացած մարմինը 1194 թուականին կը գտնուի նոյն ամրոցին ստորոտը՝ ժայռերուն վրայ, որուն համար ալ մեր եկեղեցու պատմութեան մէջ ան Քարավէժ կը կոչուի: Հեթում Բ. Հռոմի Նիկողայոս Դ. պապի պահանջներուն ընդառաջելու եւ լատինադաւանութիւնը Հայ եկեղեցիէն ներս կենսագործելու նպատակով՝ կաթողիկոսական աթոռէ կը զրկէ Կոստանդին Բ. Պրոնապործ կաթողիկոսը եւ բռնաճնշումներու ու աքսորի կ'ենթարկէ այն բոլոր եկեղեցականները, որոնք կ'ընդդիմանային Հռոմեական կաթօլիկ եկեղեցիին հետ միութեան ծրագրին: Այս եւ նման փաստեր ցոյց կու տան, որ պետութիւն եւ եկեղեցի փոխյարաբերութիւնը հայ իրականութեան մէջ նաեւ այս ժամանակաշրջանին օրինակարգուած չէ եղած:

Այս առնչութեամբ կարելի է ըսել, որ նման առաջին նախաձեռնութիւն մը 1184-ին կատարած է Մխիթար վրդ. Գօշ իր վերոյիշեալ «Գիրք դատաստանի» աշխատութեամբ, իսկ ավելի ուշ՝ 1265-ին, Սմբատ Սպարապետ՝ իր վերոգրեալ «Դատաստանագիրք»-ով:

Նշուած գոյգ աշխատութիւններուն պարագային պետք է ընդգծել, որ անոնք պետութիւն եւ եկեղեցի փոխյարաբերութիւնները ամրագրող օրինակարգեր չեն, այլ պարզապէս մինչ այդ ժառանգաբար ընդունուած սովորութիւններ, որոնք, հետագային մշակուելով եւ համալրուելով, հայոց պետականութեան եւ եկեղեցիին միջեւ գոյացած փոխադարձ համաձայնութեամբ, կրնային ստանալ պաշտօնական բնոյթ եւ կենսագործում պետական, եկեղեցական եւ հասարակական կեանքի հոլովոյթին մէջ: Դժբախտաբար, 1375 թուականին Կիլիկիոյ հայկական թագաւորութեան կործանումին պատճառով նման զարգացում մը տեղի չունեցաւ: Իսկ պետականութեան դարաւոր բացակայութեան պատճառով պետութիւն եւ եկեղեցի փոխյարաբերութեանց վերաբերեալ օրինակարգ մը ստեղծելու մասին մտածելն իսկ, այս պարագային, անիմաստ է:



Գիրք անուանեալ «Որոգայթ փառաց», հրտ. Յակոբ Շահմիրեան, Մատրաս, 1773 թ.:

Հայոց պատմութեան համար կարեւորագոյն փաստ մը կը ներկայացնէ ԺԸ. դարուն Հայաստանի ազատագրութեան Մատրասի խմբակին մշակած սահմանադրական նախագիծը, որ շարադրած է Շահմիր Շահմիրեան, ապա Մատրասի մէջ զայն «Որոգայթ փառաց» վերանգրով հրատարակած է իր որդին՝ Յակոբ Շահմիրեանը տիտղոսաթերթին վրայ նշուած 1773 թուականին: Ի դէպ, այս տարի Շահմիր Շահմիրեանի ծննդեան 300, իսկ «Որոգայթ փառաց»-ի տպագրութեան 250-ամեակն է: Արդարեւ, այս գիրքին Բ. մասը 521 յօդուածներէ կազմուած սահմանադրութիւն մըն է ազատագրուած Հայաստանը կառավարելու վերաբերեալ: Խիստ հետաքրքրական է, որ առկայ սահմանադրութեան մէջ, տակաւին այդ ժամանակաշրջանին, առաջարկուած պետական-կառավարական վարչաձեւը խորհրդարանական է, եւ կառավարութիւնը կը գտնուի «Հայոց տան», այսինքն՝ խորհրդարանի վերահսկողութեան ներքոյ:

Օրէնքին գերակայութիւնը հասարակութեան մէջ կը հանդիսանայ իւրաքանչիւր

անհատի արդար եւ ազատ կեանքի երաշխիքը: Ազգին բոլոր զաւակները, նաեւ ղեկավարներն ու մեծամեծները հաւասարապէս ենթակայ են անոր: Օրէնքէն վեր ոչ ոք ըլլալու սկզբունքին կիրառումը հասարակական կեանքին մէջ բոլոր տեսակի չարաշահումները կանխարգիլելու միակ միջոցն է: Պետութիւնը անջատ է եկեղեցիէն եւ հասարակական կեանքի շատ մը բնագաւառներ, ինչպէս օրինակ՝ ուսումը, կը վերաբերին պետական իրաւասութեան: Մարդու եւ Աստուծոյ միջեւ գոյութիւն ունի միայն մէկ իշխանութիւն, որ օրէնքն է, որուն ենթակայ պետք է ըլլայ նաեւ եկեղեցին:

Երբ 1828 թուականին Արեւելեան Հայաստանը, պարսկական գերիշխանութենէն ազատագրուելով, կը միացուի Ռուսական կայսրութեան, ցարական իշխանութիւնները կ'որոշեն Հայ եկեղեցիին համար մշակել վարչակազմակերպչական կանոնագրութիւն մը, որուն միջոցաւ կարելի պիտի ըլլար հոգեւոր-եկեղեցական գործերով ղեկավարել Հայ եկեղեցին: Այս կանոնագրութիւնը, որ 1836 թուականին վաւերացուց ցարական կառավարութիւնը, ռուսերէնով կոչուեցաւ «Պոլոժենիա», իսկ հայերէնի թարգմանուելով ստացաւ «Հայ-Գրիգորեան եկեղեցւոյ կանոնադրութիւն» պաշտօնական անունը: Թիւրիմացութիւն պիտի ըլլար կարծել, թէ սոյնը պետութիւն եւ եկեղեցի փոխյարաբերութիւնները կարգաւորող կանոնակարգ մըն է: Ընդհակառակը, ան՝ 10 գլուխներու մէջ ամփոփուած իր 141 յօդուածներով, եկեղեցիին կը վերապահեր միայն հոգեւոր ծառայութիւններու եւ եկեղեցական հաստատութիւններու ղեկավարման գործընթացը, եւ հոն հաստատուած «Սինոտ»-ին միջոցով ցարական կառավարութիւնը կը վերահսկեր եկեղեցւոյ վերնախաւին կողմէ առնուած որեւէ որոշում: Բաց աստի՝ կաթողիկոսական ընտրութիւններուն առթիւ ցարին պիտի ներկայացուէին երկու թեկնածուներու անուններ, որոնցմէ մէկուն վաւերացումը՝ իբրեւ ամենայն հայոց կաթողիկոս, ամբողջութեամբ կը վերապահուէր իր բացարձակ գերիշխանութեան: Սոյնը կոպիտ խախտում մըն էր Հայ եկեղեցւոյ աւանդական սկզբունքներուն եւ ժողովրդավարական կանոններուն: Այնուամենայնիւ, այսպէս ղեկավարուեցաւ Հայ եկեղեցին մինչեւ Արեւելեան Հայաստանի մէջ խորհրդային կարգերու հաստատումը 1920 թուականին, իսկ 2 փետրուար 1922-ին հաստատուած Խորհրդային Հայաստանի նոր սահմանադրութեան համաձայն՝ եկեղեցին պետութենէն բաժնուեցաւ, եւ մինչ այդ եկեղեցիին տնօրինութեան տակ գտնուող կալուածային, ուսումնական եւ քաղաքացիական գործերը եւ անոնց ղեկավարումը ենթարկուեցան պետական մարմիններու իրաւասութեան:

Անդրադառնալով հայ մտաւորականներու կողմէ 1860 թուականին Կ.Պոլսոյ մէջ պատրաստուած «Ազգային սահմանադրութիւն հայոց»-ին, որ երեք տարի ուշացումով, նաեւ Էական կրճատումներով 17 մարտ 1863-ին վաւերացուեցաւ օսմանեան կառավարութենէն՝ անուանուելով «Նիզամանամէի Միլլէթի Էրմենիան», այսինքն՝ «Հայ ազգի կանոնադրութիւն», ընդամենը արեւմտահայերու կրօնահամայնքային կեանքը կարգաւորող կանոնագրութիւն մըն էր, ուստի բոլորովին հեռու էր պետութիւն եւ եկեղեցի յարաբերութիւնը սահմանող օրէնսդրութիւն մը ըլլալու յաւակնութենէն:

28 մայիս 1918 թուականին հիմնադրուած Հայաստանի Ա. Հանրապետութիւնը, կանգնած գոյութենական, տնտեսական ու քաղաքական ծանրագոյն մարտահրաւերներու դիմաց, բոլորովին հնարաւորութիւն չունեցաւ մշակելու առանձին սահմանադրութիւն մը, այլ մինչեւ իր կարճատեւ գոյութեան վախճանը՝ 1920 թ., պետութեան ղեկավարները ստիպուած եղան որոշ փոփոխութիւններով կիրառելու «Ռուսական կայսրութեան հաւաք օրինաց»-ը:

Արդէն ակնարկուեցաւ, որ Հայաստանի մէջ խորհրդային կարգերու հաստատումով եւ 1922-ին ընդունուած սահմանադրութեամբ Հայ եկեղեցին ոչ միայն խորհրդային իշխանութենէն բաժնուած յայտարարուեցաւ, այլեւ անաստուածութեան գաղափարախօսութեան մեկնարկած հակակրօնական քաղաքականութեան հետեւանքով ան ենթարկուեցաւ դաժան հալածանքներու: Մինչեւ 1937 թուականի վերջը, խորհրդային Հայաստանի տարածքին փակուեցաւ շուրջ 800 եկեղեցի, իսկ միայն 1930-1938 թուականներուն բռնադատուեցան 164 եկեղեցականներ, որոնցմէ կեսէն ավելին՝ շուրջ 91 հոգի, դատապարտուեցան գնդակահարութեան մահապատիժին: Չեկայի գործակալներուն ձեռքով խեղդամահ կ'ըլլայ խորէն Ա. Մուրատբեկեան կաթողիկոսը: 4 Օգոստոս 1938 թուականին Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան Կեդրոնական կոմիտէն կ'որոշէ փակել Ս. Էջմիածինը եւ վերացնել Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը: Միայն վերահաս Բ. Համաշխարհային պատերազմին ստեղծած իրադրութեան փոփոխութեան պատճառով կը կանխարգիլուի այդ չարաբաստիկ որոշումին կենսագործումը:

1945-էն ետք, երբ ամբողջ խորհրդային Միութեան մէջ եկեղեցիին հանդէպ կը դրսեւորուի հանդուրժողականութեան որոշակի ոգի մը, նաեւ Հայաստանի մէջ կը հաստատուի «Կառավարութեան առընթեր եկեղեցական գործերու խորհուրդ» մը, որուն կը տրուի խորհրդային կառավարութեան եւ եկեղեցիին միջեւ կապ պահպանելու լիազօրութիւն, չըսելու համար եկեղեցիին արդէն իսկ սահմանափակ գործունեութիւնը վերահսկելու նպատակ:

1991 թուականին՝ խորհրդային կարգերու փլուզումէն ետք, նորանկախ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը ժողովրդային հանրաքուէով 5 Յուլիս 1995 թուականին կ'ընդունի նոր ազգային սահմանադրութիւն մը: Մինչեւ 2015 թուականը, սոյն սահմանադրութիւնը կ'ունենայ երկու փոփոխութիւն: ՀՀ սահմանադրութեան 1995 թուականի տարբերակը Հայ եկեղեցւոյ մասին առանձին յօդուածներ չի պարունակեր, այլ կայ միայն յօդուած մը խղճի ազատութեան եւ կրօնի մասին, որ կը նշէ.

«Իւրաքանչիւր ոք ունի մտքի, խղճի եւ դաւանանքի ազատութեան իրաւունք: Կրօնի եւ համոզմունքների արտայայտման ազատութիւնը կարող է սահմանափակուել միայն օրէնքով՝ Սահմանադրութեան 45 յօդուածում նախատեսուած հիմքերով»

Մէկ խօսքով՝ սահմանադրութեան 1995-ի տարբերակին մէջ պետութիւն եւ եկեղեցի

փոփոխութեան վերաբերեալ յօդուած գոյութիւն չունի: Վերոգրեալ յօդուածը այլ կրօնական կազմակերպութիւններու շարքին նաեւ Հայ եկեղեցիին անուղղակի կու տայ գոյութիւն ունենալու եւ գործունէութիւն ծաւալելու արտօնութիւն՝ խղճի եւ դաւանանքի ազատութեան իրաւունքի սահմաններուն մէջ:

2005 թուականի սահմանադրութեան փոփոխութիւններուն մէջ կը նշուի.

«Հայաստանի Հանրապետութիւնում եկեղեցին անջատ է պետութիւնից:

Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչում է Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցուն՝ որպէս ազգային եկեղեցու բացառիկ առաքելութիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքում, նրա ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետութիւնում երաշխաւորում է օրէնքով սահմանուած կարգով գործող բոլոր կրօնական կազմակերպութիւնների գործունէութեան ազատութիւնը:

Հայաստանի Հանրապետութեան եւ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու յարաբերութիւնները կարող են կարգաւորուել օրէնքով»:

Իսկ 2015 թուականի եւ այսօր ալ գործող սահմանադրութեան 17-րդ՝ **«Պետութիւնը եւ կրօնական կազմակերպութիւնները»** խորագրով յօդուածը կ'ամրագրէ.

«1. Հայաստանի Հանրապետութիւնում երաշխաւորում է կրօնական կազմակերպութիւնների գործունէութեան ազատութիւնը:

2. Կրօնական կազմակերպութիւններն անջատ են պետութիւնից»

Ինչպէս նախորդին մէջ, վերոգրեալ այս երկրորդ յօդուածով Հայ եկեղեցին եւս, որպէս կրօնական կազմակերպութիւն մը, անջատ կը նկատուի պետութենէն:

Սակայն պետք է հարց տալ, թէ ի՞նչ կը նշանակէ վերոգրեալ «Կրօնական կազմակերպութիւններն անջատ են պետութիւնից» սկզբունքը, ընդամին՝ պետութիւն եւ եկեղեցի տարանջատման դրոյթը: Նախ՝ որ ՀՀ քաղաքացիները կրնան ազատօրէն դաւանիլ իրենց հաւատքը՝ առանց սահմանափակուելու այն փաստով, թէ անոնք ո՞ր կրօնին կամ եկեղեցական յարանուանութեան կը պատկանին: Ոչ մէկ կրօնական կազմակերպութեան իրաւունք կը վերապահուի բռնութիւն կիրառելով ՀՀ քաղաքացիներէն որեւէ մէկուն պարտադրել դաւանելու համար իր սեփական կրօնը, կամ կրօնափոխութեան, այլապէս՝ դաւանափոխութեան պարագային զայն ենթարկել հալածանքի:

Այսպէս, պետութիւնը առկայ սահմանադրութեամբ ինքզինք կը պարտաւորեցնէ չէզոք կեցուածք որդեգրելու Հայաստանի Հանրապետութեան մէջ գոյութիւն ունեցող կրօնական բոլոր կազմակերպութիւններուն նկատմամբ եւ ինքզինք չնոյնացնել անոնցմէ որեւէ

մէկուն հետ: Այնուամենայնիւ, պետութիւն եւ կրօն կամ, մեր պարագային, պետութիւն եւ եկեղեցի սահմանադրական տարանջատումը, այլապէս՝ պետութեան «չեզոք» վերաբերումը հանդէպ եկեղեցիին, չի նշանակեր, թէ պետութիւնը կը մերժէ կամ անտարբեր կը գտնուի Հայաստանի մէջ առկայ կրօնական կազմակերպութիւններուն կամ եկեղեցիներուն նկատմամբ: Այս «չեզոք»-ութիւնը կամ պետութիւն եւ եկեղեցի իրարմէ «անջատ» ըլլալու օրէնքը խորքին մէջ «օժանդակող չեզոք»-ութիւն մըն է, մասնաւորաբար՝ Հայց. առաք. սուրբ եկեղեցիին հանդէպ պետութեան ցուցաբերած լիարժէք յանձնառութեամբ, որ կ'արտայայտուի «Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին» առանձին խորագիրը կրող 18-րդ յօդուածի առաջին համարին մէջ.

«1. Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչում է Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցուն՝ որպէս ազգային եկեղեցու բացառիկ առաքելութիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքում, նրա ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործում»:

Այնպէս կը թուի, որ այս առնչութեամբ պետութեան եւ եկեղեցիին միջեւ փոխադարձ համաձայնութիւն մը գոյութիւն ունի, որ դրականապէս կը գործադրուի, զորօրինակ՝ կրթութեան եւ մշակոյթի պահպանման մարզէն ներս, դպրոցներու մէջ Հայ եկեղեցւոյ պատմութեան դասաւանդման, նաեւ Երեւանի պետական համալսարանի յարկին տակ աստուածաբանական ֆակուլտետի գիտական գործունեութեան իրականացումով: Թէպէտ նշուած օրինակները Հայց. առաք. սուրբ եկեղեցիին հոգեւոր-բարոյական վերահսկողութեան տակ կը գտնուին, սակայն, ի վերջոյ, պետութիւնն է, որ կ'ապահովէ այդ առարկաները դասաւանդող ուսուցիչներուն ամսավճարը: Բաց աստի՝ պատմական որոշ եկեղեցիներ վերանորոգելու հարցը նմանապէս պետութեան ստանձնած պատասխանատուութիւններու ծիրին մէջ կը մտնէ: Իսկ նորակառոյց եկեղեցիներու կամ Մայր Աթոռի նիւթական յանձնառութեամբ, այլապէս՝ բարերարներու օժանդակութեամբ վերանորոգուող եկեղեցիներու պարագային նորէն պետութիւնն է, որ կու տայ համապատասխան արտօնութիւնը:

Առանձնապէս հետաքրքրութիւն կը ներկայացնէ վերոգրեալ յօդուածին երկրորդ համարը այն իմաստով, որ կ'անդրադառնայ պետութիւն եւ Հայց. առաք. սուրբ եկեղեցի յարաբերութիւնները կարգաւորող օրէնքին.

«2. Հայաստանի Հանրապետութեան եւ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու յարաբերութիւնները **կարող են կարգաւորուել օրէնքով**»:

Ի դէպ, հարց պէտք է տալ, թէ ի վերջոյ խօսքը ո՞ր օրէնքի մասին է, ո՞ր օրէնքն է, որ կրնայ կարգաւորել Հայաստանի Հանրապետութեան եւ Հայց. առաք. սուրբ եկեղեցւոյ յարաբերութիւնները: Կա՞յ արդեօք այդպիսի օրէնք մը: ՀՀ սահմանադրութիւնը այս մասին ոչինչ կը բնորոշէ: Այլ խօսքով՝ սահմանուած չէ օրէնք մը, որ կը ճշդէ պետութիւն եւ եկեղեցի յարաբերութեան ձեւաչափերն ու գործընթացը:

Այս ուղղութեամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի որոշումով եւ Գարեգին Բ. կաթողիկոսի գործակցութեամբ՝ 3 մայիս 2019 թուականին կը կայանայ աշխատանքային մասնաւոր յանձնախումբի մը առաջին նիստը՝ կարգաւորելու համար պետութիւն եւ եկեղեցի փոխյարաբերութիւնները: «Հրապարակ» թերթը այս մասին կը հաղորդէ.

«Յունուարի 29-ին հրապարակուեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի որոշումը, որով ստեղծուեց է աշխատանքային խումբ՝ կարգաւորելու համար պետութեան եւ Հայ առաքելական եկեղեցու միջեւ յարաբերութիւններում առաջ եկած խնդիրները: Որոշման մէջ մասնաւորապէս ասուեց է. «Ղեկավարուելով «Կառավարութեան կառուցուածքի եւ գործունեութեան մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 7-րդ յօդուածի 16-րդ մասով՝ ստեղծել Հայաստանի Հանրապետութեան եւ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու յարաբերութիւններին առնչուող հարցերով աշխատանքային խումբ եւ հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն յաւելուածի»:

Մայր Աթոռը, ի դէմս իր խօսնակ Վահրամ քահանայ Մելիքեանի, արդէն հասցրել է ողջունել այդ յանձնաժողովի ստեղծումը՝ հետեւեալ յայտարարութեամբ. «Ողջունելի է ՀՀ իշխանութիւնների յանձնառութիւնը Ազգային եկեղեցու առջեւ ծառայած հարցերին լուծումներ գտնելու հարցում յանուն մեր ազգային ու հոգեւոր զարթօնքի: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրամանով յունուարի 29-ին ստեղծուած աշխատանքային խումբը ձեւաւորուել է Ամենայն հայոց կաթողիկոսի եւ ՀՀ վարչապետի քննարկումների արդիւնքում՝ փոխադարձ համաձայնութեամբ: Վստահ ենք, խմբի աշխատանքը, Աստուծոյ կամօք, կը նպաստի եկեղեցի-պետութիւն յարաբերութիւնների առաւել արդիւնաւետ ծառայեցմանը մեր հայրենիքի եւ աշխարհասփիւռ ժողովրդի շահերին»

Սոյն յայտարարութեան առնչութեամբ «Հրապարակ» թերթը կը նշէ.

«Առաւել ստանդարտ եւ ոչինչ չասող յայտարարութիւն երեւի թէ դժուար կը լինել պատկերացնել»

Արդարեւ, ի՞նչ արդիւնքներու հասաւ այս յանձնաժողովը, կամ Հայաստանի Հանրապետութեան եւ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցիին յարաբերութիւններուն առնչուող հարցերով ան ինչպիսի՞ օրինակարգ մը կրցաւ ապահովել՝ դժուար է ըսել: Այսօր մէկ իրողութիւն կարելի է հաստատել, որ պետութիւն եւ եկեղեցի փոխյարաբերութիւնները, նաեւ գործակցութիւնը կը գտնուին ամենավատ եւ լարուած վիճակի մը մէջ: Դժբախտաբար, Հայաստանի մէջ ստեղծուած արտաքին եւ ներքաղաքական պառակտուած կացութիւնը եւ Արցախեան Բ. պատերազմին չարաբաստիկ աղետը միանգամայն չնպաստեցին պետութիւն եւ եկեղեցի յարաբերութիւններու կայացման, այլ ընդհակառակը՝ ստեղծեցին խիստ լարուած, չըսելու համար «թշնամական» իրավիճակ մը:

Պարագան ի՞նչ ալ ըլլար, արդեօ՞ք կաթողիկոսը Արցախեան 44-օրեայ պատերազմին

վերջ դրած զինադադարէն գրեթէ ամիս մը ետք՝ 8 դեկտեմբեր 2020 թուականին, պետք է պահանջեր ՀՀ վարչապետին հրաժարականը: Մի՞թէ ան ունի նման իրաւալիազօրութիւն մը, որ արձանագրուած է ՀՀ սահմանադրութեան կամ թելուզ եկեղեցական որեւէ կանոնագիրքի մը մէջ: Ըսել, թէ հայրենիքի եւ հայ ժողովուրդի գոյութեան վերաբերող հարցեր եկեղեցիին եւ անոր ընդմէջէն եկեղեցւոյ վերնախաւին կամ ուղղակի կաթողիկոսին ալ կը վերաբերին՝ բաւարար չէ: Նման պատասխանատու քայլ մը պետք է անպայման օրինական հիմք ունենայ, որուն համար գոյութիւն ունին ՀՀ նախագահ, Հայաստանի Ազգային ժողով, ժողովրդավարական կարգեր, ընտրութիւն կազմակերպելու եւ ատոր միջոցաւ Հայաստանի քաղաքացիներուն կամքը արտայայտելու օրինակարգ եւ այլն: Հարց պետք է տալ՝ Հայաստան կը ներկայացնէ բացարձակ միապետութիւն մը, կրօնապետութիւն մը, թէ, – իր բոլոր թերութիւններով հանդերձ, – սահմանադրական պետութիւն մը: Կը կասկածիմ, եթէ եկեղեցին հոգեւոր-բարոյական ոլորտէն բացի՝ իրաւասութիւնը ունենայ վերոնշեալ օրինաչափութենէն վեր ինքզինքին վերապահելու զուտ քաղաքական հանգամանք ունեցող լիազօրութիւն մը:

Եկեղեցիին հեղինակութիւնը միանշանակ հոգեւոր-բարոյական հանգամանք ունի՝ «սեր սերմանելու հոն, ուր ատելութիւն կայ, ներում շնորհելու հոն, ուր վիրաւորանք կայ, միութիւն բերելու հոն, ուր տարակարծութիւն կայ, ճշմարտութիւն բացայայտելու հոն, ուր սխալ կայ, հաւատք ներշնչելու հոն, ուր կասկած կայ, յոյս տալու հոն, ուր յուսահատութիւնը կ'ընկճէ, լոյս սփռելու հոն, ուր խաւարը կ'իշխէ, միսիթարութիւն բերելու հոն, ուր տրտմութիւնը արցունք կը քամէ»:

Եկեղեցին կուսակցութիւն մը չէ, որ կողմ բռնէ: Կաթողիկոսը զգուշ պետք է ըլլայ կամայ թէ ակամայ դառնալու կուսակցապետ մը: Կաթողիկոսին առաջին եւ կարեւորագոյն յատկանիշը իր հայկազուն հօտին հոգեւոր հայր ըլլալն է, անոր համար ալ ան կը կոչուի «հայրապետ»: «Հայր» եւ «պետ» գոյականներէն կազմուած այս բառակապակցութիւնը պետք չէ սահմանափակել լոյ եկեղեցական հայրերուն պետը ըլլալու դրութեամբ, այլ բոլոր այն հաւատացեալներուն, որոնք անդամ կը նկատուին Հայց. առաք. սուրբ եկեղեցիին: Այլապէս ան կը կորսնցնէ իր զաւակներուն միջեւ հօր մը հաշտարար դերակատարութիւնը եւ ազգին կողմէ իրեն վստահուած արժանահաւատ բարձրագոյն հեղինակութիւնը:

Այսօրուան վիճակով, մեր շատ մը պակասներու կարգին, կարեւորագոյններէն մին՝ արժանահաւատ հեղինակութեան մը հաշտարար գործին եւ պատկառազօր խօսքին էական կարիքն ունեինք, ներքաղաքական պառակտուած եւ հակոտնեայ կիրքերէ հրկիզուած դաշտին վրայ հայրական սեր եւ գուրգուրանք ցօղելու: Այս առնչութեամբ ինչքան յատկանշական է, որ Հռոմեական կաթողիկէ եկեղեցւոյ քահանայապետին՝ Հռոմի պապին բարձրագոյն տիտղոսը՝ «pontifex maximus» է, որ բառին բուն իմաստով ոչ այլ ինչ՝ քան գերազանցապէս «ամենամեծ կամուրջ ստեղծող» կամ «ամենամեծ կամուրջ կառուցող» կը նշանակէ: Իւրաքանչիւր ճշմարիտ հոգեւորական իր ծառայական առաքելու-

թեան մէջ պէտք է, որ այս կոչումը կրէ, որպէս մարդկային յարաբերութիւններու մէջ կամուրջ կառուցող, հեռաւորութիւններ իրարու մօտեցնող, տարաբնոյթ բազմազանութիւններուն եւ այլազանութիւններուն մէջ միութիւն եւ ներդաշնակութիւն ստեղծող: Ներկայ ժամանակներու մեր իրականութեան մէջ այս կարեւորագոյն բացը լրացնելու հանգամանքն ու պատասխանատուութիւնը Ամենայն հայոց կաթողիկոսին վերապահուած էր, իբրեւ անկողմնակալ եւ կուսակցական հատուածականութիւններէ վեր՝ հաղորդակցութիւն եւ միութիւն ստեղծող հոգեւոր-բարոյական հեղինակութիւն մը: Դժբախտաբար, ան կորսնցուց այս բախտորոշ առիթը՝ առաւել քան սնանկացնելով եկեղեցիին քրիստոնէական առաքելութեան եւ ծառայական հեղինակութեան դարաւոր կալուածը:

Պետութիւն եւ եկեղեցի յարաբերութիւնները կարգաւորելու հարցով նաեւ պէտք է նկատի ունենալ այն կարեւորագոյն հիմնախնդիրներէն մէկը, որ բոլոր կրօնական կազմակերպութիւններն ու եկեղեցիները առանց բացառութեան, ներառեալ Հայց. առաք. սուրբ եկեղեցին, պէտք է անպայման ներգրաւուին հարկային դաշտին մէջ: Սակայն սոյնը ծաւալուն եւ առանձին նիւթ մըն է, որուն հանդէպ այլազան մօտեցումներ ցուցաբերած են պետական մարմիններն ու եկեղեցին, եւ այս նիւթին շուրջ լայնօրէն անդրադարձած է հայ մամուլը: Բայց եւ այնպէս առկայ հիմնախնդիրը ցայսօր կարգաւորուած չէ, եւ այս ալ մեր շատ մը անորոշութիւններու շարքին վերջնական հանգուցալուծումի մը կը կարօտի:

Յաւարտ բանիս, կ'արժէ այստեղ անգամ մը եւս տալ հարցումը. ինչպէ՞ս է կարգաւորուած Հայաստանի Հանրապետութեան եւ Հայց. առաք. սուրբ եկեղեցիին միջեւ փոխ-յարաբերութիւնը: Փաստօրէն՝ պետութիւնը եւ եկեղեցին, ըստ ՀՀ սահմանադրութեան, իրարմէ անջատ են: Պետութիւնը կը ճանչնայ Հայ եկեղեցիին ունեցած բացառիկ առաքելութիւնը հայ ժողովուրդի հոգեւոր կեանքին, առանձնապէս անոր դերակատարութիւնը ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործին մէջ, սակայն ցայսօր տակաւին ամենեւին ճշդուած չէ, թէ ի՞նչ օրինակարգով կամ ո՞ր օրէնքով կը կարգաւորուին Հայաստանի Հանրապետութեան եւ Հայ եկեղեցիին միջեւ յարաբերութիւնները:

Հմմտ. Ղկ. Ի, 25:

Հմմտ. Հռոմ. ԺԳ, 1-3:

Տե՛ս Յայտ. Յովի. ԺԳ. 1-18:

Հմմտ. Գործք Ե, 29:

Քուրմերուն մէկ մասը սպաննուած է, ուրիշ մաս մը փախած է Հայաստանէն, երրորդ մաս մըն ալ քրիստոնէութիւնը ընդունած է: Ազաթանգեղոս իր «Հայոց պատմութեան»

մէջ լայն տեղ տրամադրած է յօժարակամ հաւատափոխութիւններուն, Ս. Գրիգոր Լուսաւորիչի քարոզչական անդով գործունեութեան շնորհիւ հեթանոս հաւատացեալ բազմութիւններու, քուրմերու եւ անոնց որդիներու քրիստոնեութեան դարձին, ինչպէս նաեւ քահանայական ձեռնադրութեան, ընդհուպ մինչեւ եպիսկոպոսներու օժման նկարագրութիւններուն: Գրեթէ բացառութիւններ են բռնի հաւատափոխութեան համար մահուան սպառնալիքի պարագաները, որոնք աւելի կը վերագրուին Տրդատ Գ. թագաւորին, թէ «Մեծասաստ իշխանութեամբ հրաման տուաւ այն կողմերու սատանայակուր եւ դիւամով ազգերուն՝ թօթափել ու ազատիլ ունայն, հինցած սնտիապաշտութենէն եւ հնազանդիլ Քրիստոսի ծառայութեան լուծին» (հմմտ. Ագաթանգեղոս, «Պատմութիւն Հայոց», «Մատենագիրք Հայոց», Բ. հատ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1680): Իսկ Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ «Այնուհետեւ չէր ապաւիներ թագաւորի ահին ու սաստին՝ ամենքին հնազանդեցնելու համար» (Նոյնը, էջ 1681): Բայց անդրադառնալով Վահեվանեան մեհեաններու կործանման վերոգրեալ պարագաներուն՝ Ագաթանգեղոս կը խոստովանի, թէ «Այդտեղ գտնուող եւ քրմութեան ծառայող մարդոցմէ շատեր կոտորուեցան, անոնց ոսկորները անհետ եղան» (Նոյնը, էջ 1692-1693):

Տրդատ Գ.-ի դարձին աւանդապատումը, ապա Տիրան թագաւորին եւ Յուսիկ կաթողիկոսին միջեւ տեղի ունեցած բախումները՝ հայոց պետականութեան նկատմամբ եկեղեցիին գերադասութեան ձգտումներուն վերաբերեալ պերճախօս վկայութիւններէն են:

Հմմտ. Փաւստոս Բիւզանդ, «Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 32:

Հայոց 10-րդ ամիս (մայիս 2-էն յունիս 5):

«Կանոնագիրք Հայոց», աշխ. Վազգէն Հակոբյան, Բ, Երևան, 1971, էջ 91-92:

Այս առնչութեամբ պերճախօս օրինակ մըն է հայ նախարարներու կեդրոնախոյս ընթացքը Արտաշէս Դ. Արշակունիի դէմ: Ս. Սահակ հայրապետ ի զուր կը փորձէ հաշտարար ոգի եւ խոհեմութիւն թելադրել հայ նախարարներուն, ըսելով՝ «Ինչպէ՞ս կարելի է այդ իմ ախտաւոր ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որու առողջութիւնը պատուհաս է մեզի համար» (հմմտ. Մովսէս Խորենացի, «Պատմութիւն հայոց», Երևան, 1991, էջ 347): Պատմահայր Խորենացիին մօտ առանձնապէս յատկանշական է այս մասին իր աւանդած տխուր դէպքերուն ենթախորագիրը, որ ինքնին շատ բան կը հաղորդէ մեզի. «Յաղագս չար միաբանութեանն Հայոց ի խորհուրդ կորստեան անձանց» (հմմտ. Նոյնը, էջ 346):

Հմմտ. Մխիթար Գօշ, «Դատաստանագիրք Հայոց», հրտ. Վահան վրդ. Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 299:

Հմմտ. Նոյնը, էջ 305:

Հոս հարցը այն չէ, թէ թագաւորը խորան բարձրանալով իրաւասութիւն ունենայ կրօնա-

կան որեւէ արարողութիւն կատարելու: Բնականաբար ատոր ո՛չ կարիքը, ո՛չ ալ պահանջքը կայ: Այլ ան ըլլալով Տիրոջ օծեալը՝ նաեւ կրօնական հարցերու մէջ համապատիւ կը նկատուի կաթողիկոսին, աստուածային իրաւունքով ունենալով իրաւասութիւնը նաեւ բարձրանալու ս. խորան, որ չձեռնադրուած կամ ծիսական օծում չստացած սովորական աշխարհականի մը արգիլուած է:

Հմմտ. Սմբատ իշխանի (Գունդստաբլ), Դատաստանագիրք, հրտ. Արսէն վրդ. Ղլտճեան, Ս. Էջմիածին, 1918, էջ 17:

Հմմտ. Մխիթար Գօշ, «Դատաստանագիրք Հայոց», անդ, էջ 422:

Թեպէտ տիտղոսաթերթին վրայ թիւրիմացաբար 1773 թիւը նշուած է, սակայն իրողութեան մէջ պետք է 1783 թուականը ըլլայ: «Որոգայթ փառաց»-ը նաեւ հրատարակուած է Թիֆլիս՝ 1913 թուականին, ապա արեւելահայերէնի թարգմանուելով՝ 2002-ին հրատարակուած է Երեւանի մէջ, «Հ. Շահմիրյան, Շ. Շահմիրյան, Որոգայթ փառաց, Երևան, 2002 թ.:

Հմմտ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1>

Հմմտ. <https://president.am/hy/constitution-2005/>

Հմմտ. <https://president.am/hy/constitution-2015/>

Նոյնը:

2018 թուականէն ետք, ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի (ՀՀ ԿԳՄՍ) նախարարութիւնը կը մշակէ բարեփոխումներու ծրագիր մը դպրոցական որոշ առարկաներու դասաւանդման վերաբերեալ: Համաձայն այս ծրագրին՝ «Հայ եկեղեցւոյ պատմութիւն» առարկայի դասաւանդումը պիտի ներառուէր «Հայոց պատմութիւն» առարկային մէջ: Կառավարութեան սոյն մտադրութիւնը կը գտնէ **հանրային լայն արձագանգ մը, իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը այս հարցով կը դրսեւորէ իր անհամաձայնութիւնը: Առ այսօր, փոխադարձ համաձայնութիւն մը ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեւ գոյացած չէ**

Բացի այն եկեղեցիներէն ու վանքերէն, որոնք ՀՀ կառավարութիւնը կալուածային իրաւունքով վերադարձուցած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, ինչպէս օրինակ՝ Հաղբատն ու Սանահինը, նաեւ շարք մը ուրիշ եկեղեցիներ ու վանքեր:

Նոյնը:

Տե՛ս <https://hraparak.am/post/64830078>

Նոյնը:

There are no comments yet.